

ՏԱՍԵՐՈՐԻՒ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան դիմել 10 րուր, կես տարվան 6 րուր: Առանձին համարները 5 կոպեկով: Թիֆլիսում գրվում են միայն նամակները մեջ: Թարգմանությունը դիմում են արգանի Կոնստ. Քեդակյան «Մուսակ»:

Խմբագրատունը բաց է առաւօտուն 10—2 ժամ (Բացի կիրակի և տոն օրերից): Ցայտարարութիւնը բնութագրում է ամեն լիզուով: Ցայտարարութիւնների համար զեմբում են խորանարդը թուրք 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԵՒԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ երեանից: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Հայաստանի ժողովուրդը ինչ կը կարօտի: Անգլիա: Գլխաւոր: Նի ճառը: Շահաւետ առաջարկութիւն: Նամակ Աւստրալիայից: Արտաքին լուրեր: — ՀԵՌԱՎԻՒՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յուլիսի 28

Երեանի արեւելեան կողմն է ընկնում Նորգ աստված քաղաքամասը, որն աւելի գիւղ է, քան թէ քաղաք: Քաղաքի կենդանոցի հետու է Նորգը երեք վերտաւայտի, իսկ քաղաքից դէպի հիւսիս գնացող մեծ խճուղիի գլխից՝ մէկ և կէս վերտաւայտի Նորգի գիւղը համեմատած քաղաքի դրքի հետ, կարելի է մօտ 400 ֆուտ աւելի բարձր համարել Նորգին: Այս պատճառով շատ մեծ զանազանութիւն կայ օգի բարեխառնութեան մէջ, երբ որ քաղաքի պարտեզներում կիրաւոր, աղճը, ծիրանը և վարունգը հասած են և ուտելի, Նորգում դրանք բոլորովին դեռ խակ են լինում: Յունիս, յուլիս և օգոստոս ամիսներին քաղաքի օդը թէ ցերեկը և թէ գիշերը խաչում, խեղդում է մարդկանց, այն ինչ Նորգում ցերեկը մի թեթևութիւն է զգում մարդ բաց օդում, իսկ երեկոները և գիշերները գրեթէ զարնուային դով է զգում: Բացի մաքուր օդից, Նորգի ջուրն էլ աւելի մաքուր է քան թէ քաղաքինը: Քաղաքի երեխաների հարիւրից տասի թուշը կարմիր ու թարմ չեն, ընդհակառակը՝ Նորգում դաւուր թշուր կերկայ հազու էք տեսնում: Բոլորն էլ համարեա թարմ, կայտառ, զուարթ, քաջաուղջ, կարմրաթշիկ, ընդունակ երեխաներ են: Այս բոլորի պատճառը՝ ջուրն ու օդն է, որոնցից զուրկ է քաղաքը: Զր նայելով Նորգի աների անձաւակ, անկարգ ու անյարմար շինուածքին, չը նայելով փողոցներին, ճամբաներին նեղիկ, ծուռ ու մուռ, աղքատ և քարտեքանդ լինելուն, չը նայելով մեծ մասով բացօթեայ արտաբնոցներին և տեղ-տեղ դիզուած աղբիւսներին, այնու ամենայնիւ Նորգեցիք աւելի առողջ, աւելի ծիր և աւելի առատածնունդ են, քան թէ քաղաքի բնակիչները: Նորգը բաղկացած է 170 տուն զուտ հայ ժողովուրդից: Գրանք ունեն մի բաւականին զեղեցիկ կեղեցիկ, կոփածոյ քարից շինած, թաղի մէջ տեղում, որի բակի հարակային կողմում տղայոց՝ իսկ հիւսիսային կողմում աղջկանց ծխական դպրոցներ են, որոնք բաւականին լաւ են թէ նրախական թէ ուսման կողմից, թէպէտ և տակաւին շատ բան է պակաս, կրնանաւոր ծխական դպրոց լինելու համար: Թագն ունեցել է միշտ երկու քահանայ, այժմ մէկը վախճանած է և մինն է ժողովրդի հոգևոր պետոյը հոգում և մի և նոյն ժամանակ՝ տաս տարուց աւելի է, ուսուցչի պաշտօն է վարում յիշեալ դպրոցների մէջ: Ժողովուրդը սիրում է այս երիտասարդ քահանային, իր ուսուցչական և քահանայական պաշտօնների մէջ ըստ բաւականին ծիր և անշահաւէր լինելու համար: Բայց ախտոս որ վերջին օրերուս, «Պասկ» լրագրի մէջ, սրա մասին մի շատ չափազանցաբար զովասանական յօդուած երեւաւ: Համար, հասկացող Նորգեցիներից ոմանց յարաբերութիւնը փոխվել է դէպի տէր-վահան հայրը, որը գուցէ և մասնակց չէ յիշեալ փքված յօդուածի յօրինելուն: Մենք կը յուսանք որ հ. վահանը չի պակասացնի իր երանգը դէպի դպրոցները, ուր, իբրև որ, մեծ աշխատութիւն ունի: Նորգեցիք այժմ որոնում են մի քահանայացու ևս: Խորհուրդ կը տայինք մեր սիրելի Նորգեցիներին որ մի այնպիսին հա-

րէին, որ կարողանար իրանց դպրոցներում ուսուցիչ ևս լինել: Իմ կարծիքով այս ամենահարկաւոր և առաջին պայմանը պէտք է լինի ընտրութեան միջոցին: Նորգեցիք մեծ մասը պարապում է այգեպանութիւնով և վարունգարով, փոքր մասը պարապում է արհեստներով և վաճառականութիւնով, որոց խանութները քաղաքում են: Բոլոր Նորգեցիները, և զխաւորապէս, վաճառականներն ու արհեստագործները (նաև քաղաքի դպրոցները գնացող մանուկները), որք ստիպուած են առաւօտները իջնել քաղաք և իրիկնապահին վերադառնալ իրանց տները, զարհուրելի շարժարան են կրում ճամբի 1 1/2 վերտաւայտ վեր քարքարուտից: Այդ անասնելի նեղիկ, քարքարոտ և 3—400 ֆուտ քաղաքից վեր տանող ճանապարհ մաշում է անխնայ ոչ միայն Նորգեցից կոչիկները, այլ և նրանց առողջութիւնը: Ե տարաբնուի կերպով դժուարանում է յարաբերութիւնը քաղաքի հետ: Նորգը մինչև 30—40 թւականները համարվում էր գիւղ: Այդ ժամանակներում Նորգեցիք մօտ 400 րուրի կաշառ կերցնելով նախնական պաշտօնակատարներին՝ գրուեցին քաղաքի մասնաւում: Բայց դրանով բացի միայն, օգուտ չը տեսնւմ մինչև այսօր: Արանք գրիւղելով իրանց յանդի ընդարձակ հողերից, որոնք միացան քաղաքի հողերի հետ, ընկան աւելի ծանր տուրքերի տակ և փոխարէն ոչինչ չաճեցան: Այն օրերից մինչև այսօր Նորգեցիք քաղաքի մեղուկին վճարել են մօտ 60,000 րուրի հարկ: Այժմ իսկ վճարում են 2—3,000 րուրի տարեկան տուրք կամ հարկ քաղաքային արկղին, բայց քաղաքը սրանց հինգ կոպէկի օգուտ չէ տալիս: Բարեխառնութիւնը հսկողութիւն չունի, գիշերապահները երբէք չեն շրջում Նորգում, քաղաքի հանրու ոչ մի լապտեր չէ վառվում Նորգում: Նորգեցիք հիւանդ մեռնելիս լինի չէ կարող 1, 2, 3 րուրի այցի փող վճարելով, քաղաքային բժիշկ և մանկաբարձուհի բերել քաղաքից, այլ 6—10 րուրի վճարելու է անուշադիսի չքաւոր հիւանդները խօ միշտ մեռնում են առանց բժշկի ձայն լսելու: Եւ ինչ էք կարծում, այդքան նեղութիւններից ազատվելու համար քաղաքն ինչքան ծախս պիտի անէ: 3 կամ շատը 4,000 րուրի, որ Նորգեցիք 2 տարուայ տուրքն է քաղաքին: Քանի որ քաղաքային վարչութիւնը չը կար, Նորգեցիք աղբարարութիւնով դիմում էին նախնապապներին և մի կտոր են հացի համար ստիպուած է հրապարակաւ սուտ խօսել, ճշմարտութիւնն ուրանալ, մարդկութիւնը ոտի տակ գնել: «Մշակի» 109 համարի նամակի «անխիղճ, խաբարայ, ազգի փողերը լափող, միամիտներին խաբարող» բառերը երբէք չեն վերաբերում Վարաքիլիսի դպրոցի գործիչներին, այլ՝ առնուած են ընդհանրապէս, առհասարակ: Բայց պ. Գիւղաջին իր կեղտոտ նպատակին հասնելու համար, չէ ուղղում հասկանալ, դիտմամբ այդ խօսքերը մասնաւորում է իր վրա և խօսակցութեան առարկայ շինում: Իսկ ինչ վերաբերում է մի օր դպրոցը մանակացած կը հրատարակուի ասածս խօսքերին, այդ արդէն ինքս բացատրելի «Մշակի» ներքին լուրերում: Այդ մասին կրկին բացատրել իմ կողմից աւելորդ է, իսկ Գիւղաջին խօսքը շարամտութիւն: Ես աւել էի թէ հոգարարութիւնը մօտ 20 տարի է կրկնում եմ եթէ գիտնայի որ այդ նամակ պիտի տպագրուի, երբէք չէի գրի: Նախ չէ տուել հասարակութեան: Այդ այժմ էլ կրկնում եմ որ մինչև Պոստիանցի գալը հասարակութիւնից ոչ ոք չէր իմանում թէ իրանց դպրոցը որքան ծախք ունի, որքան մուտք, որքան իջք, որքան դրամագրուի: Գիւղաջինը սակեւ Նորգարարութիւնը միշտ հատուկ նրա ասածին և հիմնուելով ժողովրդի պահանջի վրա, ասում եմ որ աւելի լաւ կը լինի եթէ 5 տարին մի անգամ էլ հասարակութիւնը հաւաքուի և նրանց մօտ կարգադրեն այդ հարկ-

ները: Այս վերջին ձևը աւելի օգտակար է նրան համար որ ժողովուրդը խմանալով որ իրանց տուած փողերը շատացել են և ծառայում են իրանց նըպատակին, աւելի կը կրկնապատակ իր սերն և յարգանքը դէպի իր ազգային դպրոցը: Գիւղաջինը խաբարայի նամակից երևում է որ ես թշնամի եմ հոգարարութեան և ամեն բան կրքով եմ գրում և որպէս թէ աշխատում եմ ամեն կերպ կտարել հոգարարութեան վարկը և նորը ընտրել տալ: Ինքն Գիւղաջին էլ դիտել որ այդ այդպէս չէ, բայց աշխատում է այդպէս ցոյց տալ: Ես սիրել եմ այդ հոգարարութեան, և երբէք չեմ կամեցել դրանց հրաժարուիլը: Այս խօսքերին կենդանի վկայ է պ. Պոստիանցը, որ իր Վարաքիլիսա կեղծ երկրորդ առաւօտ երբ կանչեց ինձ և առանձին խօսակցութիւն ունեցաւ նոր հոգարարութեան ընտրելու մասին, ես նրան փաստելով հակադրի որ աւելորդ է այդ հարցը դարթեցնել: Այս հակադրող երիտասարդներից շատերը պատրաստուած էին ժողովի մէջ գարթեցնել այդ հարցը, բայց ես նրանց էլ խնդրեցի, նրանց էլ համոզեցի որ թողնեն իրանց մտադրութիւնը: Արջին տարին հոգարարութիւնը բուկեց աստիճանաբար դանդաղանալ և դպրոցի պակասութիւնները թողնել երեսի վրա: Արադրութիւնը խօսեց այդ թուրքութեան մասին, ի հարկէ սուրբ նպատակով, առաջն առնելու համար: Բայց բանից դուրս կեաւ որ քանի գրվում է, այնքան պակասութիւնը շատանում է: Մենք գարմանում էինք այդքան անտարբերութեան վրա, մինչև որ հոգարարութեան մէկը, նոյն իսկ Պոստիանցի ներկայութեան, առանց կարմրելու արտասանեց հետեւալ մտքը: «Ընդ մտադրի էինք շինելու այս և այն պակասութիւնները, բայց որ լրագրի մէջ գրեցին, մենք էլ վերջ թողեցինք, և քանի շատ խօսեց, այնքան շատ կը յետանայ»: Այս խօսքերից յետոյ մենք նոր խմանալք որ գլխաւորը քարով յետ տուել, յոնքը շինելու տեղ աչքը հանել ենք և վերջապէս բոլորովին ընդհակառակն ենք դարձել: Այդ բուկեցից ուստեղի և այստեղ էլ կրկնում եմ որ այստե՛հտե մի խօսք էլ չեմ ասի այդ դպրոցների գործիչներին վրա: Վերջապէս սակեւ հաւաքում եմ պ. Գիւղաջինը կողմից հայտնաբերելու և նոյնութեամբ վերադարձնում եմ իրան որպէս յայտնաբերող: Սարիբէզ Տէր-Մեղիբեանկեան

Վստարուայ ծառայողները այնքան առատ են որ նոյն պատուը ինչ որ անցեալ տարի վաճառվում էր լուրով 1 րուր 20—40 կոպէկով, այժմ վաճառվում է միայն 20—30 կոպէկի, այգեպաններից, այնինչ մրգավաճառները դարձեալ թանկ են վաճառում: Ասում են որ խաղողը քիչ պակաս է և փոշին տեղ-տեղ տուել է, դրա համար լիտր 1 ր. 50 կ., վաճառվող գինին, այժմ ճակվում է 2—3 րուրի: Լաւաշ հացի ֆունտը 3 կոպ. բարձր 4 կ., օշխարի միսը 7 կոպ. սաւարինը 8, և գառանը 6 կ. թէ և միշտ տակ-փայլից աւելի են ծախվում: ցորնի խալվաքը (30 պուր) 25—30—35 րուրի, իւղի ֆունտը 35—40 կ. 4 ձու 5 կոպ. վառեակը 30—40 կոպ. հաւը 50—60 կ., Նաթը 9 կոպ. շաքարի պուրը 8 ր. 40 կ., արագի լիտրը 4-ից բարձրացաւ 5 րուր. 60 կ. վառելափայտ սաժէնը 35—40 րուր: Տները վարձը թանկ է: Առուտոր չը կայ:

Ն Ո Ր Ա Յ Ր

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՎԻՒՆ

Թիֆլիս 9 օգոստոսի

«Մշակի» 79 համարի թղթակցները վերաբերեալ առաջնորդող յօդուածի առիթով ես ձեռք մի նամակ գրեցի Վարաքիլիսայ, յայտնելով միայն իմ լոկ կարծիքը որ եթէ լրագրութիւնը դադարի խօսել վարժապետներին և հոգարարութեան վրա, մեր դպրոցներն էլ առաջադիմութիւն չեն անի: Գուք այդ մասնաւոր նամակը (ես երբէք ցանկութիւն չունէի այդ նամակի տպագրութեան) հարկաւոր համարեցիք հրատարակել առանց իմ ստորագրութեան: Այժմ «Գիւղաջին» ստորագրութեան տակ ծածկված մի պարուն «Մշակի» 146 համարում պատասխանում է այդ նամակին և դանազան կողմից հայտնաբերելով ճշում է լուրի պէս ճշմարտութիւնը ոտի տակ գնել: Վարաքիլիսի ծծկեր երեսուն էլ, կարողաւով պ. Գիւղաջինը շողորթութեամբ շարախուած նամակը, իսկոյն կը հասկանայ որ նա չունի խղճի փշանք, նրա սրտի մէջ մեռել է ազնուութիւնը: Խաբարայի նամակագրի վերջին և առաջին շար նըպատակը այս է որ աշխատում է հոգարարութեան ժողովուրդին իմ գէտ գրգռել, ինքը լաւամարդ դառնալ և, որ զխաւորն է իր բոճիկը կամաց կամաց աւելացնել տալ: Խեղճ Գիւղաջին, մի կտոր են հացի համար ստիպուած է հրապարակաւ սուտ խօսել, ճշմարտութիւնն ուրանալ, մարդկութիւնը ոտի տակ գնել:

«Մշակի» 109 համարի նամակի «անխիղճ, խաբարայ, ազգի փողերը լափող, միամիտներին խաբարող» բառերը երբէք չեն վերաբերում Վարաքիլիսի դպրոցի գործիչներին, այլ՝ առնուած են ընդհանրապէս, առհասարակ: Բայց պ. Գիւղաջին իր կեղտոտ նպատակին հասնելու համար, չէ ուղղում հասկանալ, դիտմամբ այդ խօսքերը մասնաւորում է իր վրա և խօսակցութեան առարկայ շինում: Իսկ ինչ վերաբերում է մի օր դպրոցը մանակացած կը հրատարակուի ասածս խօսքերին, այդ արդէն ինքս բացատրելի «Մշակի» ներքին լուրերում: Այդ մասին կրկին բացատրել իմ կողմից աւելորդ է, իսկ Գիւղաջին խօսքը շարամտութիւն: Ես աւել էի թէ հոգարարութիւնը մօտ 20 տարի է կրկնում եմ եթէ գիտնայի որ այդ նամակ պիտի տպագրուի, երբէք չէի գրի: Նախ չէ տուել հասարակութեան: Այդ այժմ էլ կրկնում եմ որ մինչև Պոստիանցի գալը հասարակութիւնից ոչ ոք չէր իմանում թէ իրանց դպրոցը որքան ծախք ունի, որքան մուտք, որքան իջք, որքան դրամագրուի: Գիւղաջինը սակեւ Նորգարարութիւնը միշտ հատուկ նրա ասածին և հիմնուելով ժողովրդի պահանջի վրա, ասում եմ որ աւելի լաւ կը լինի եթէ 5 տարին մի անգամ էլ հասարակութիւնը հաւաքուի և նրանց մօտ կարգադրեն այդ հարկ-

Երևան յուլիսի 23
Եթէ ես ասեմ, թէ Երևանի հասարակութեան մէջ սկսել է զարգանալ մինչև անգամ էտտեութեան գրգռմանը, դուք դժուար կը հաւատաք ինձ: Բայց փաստերը շատ համոզել են: Առանց ընդհանուր դատողութիւնների կը բերեմ այստեղ միայն մի խոշոր, աչքի ընկնող օրինակ: Քաղաքի լայն և մարդաշատ հրապարակներից մէկի վրա բարձրանում է մի օտարտու շինութիւն, որ շէնցում է մարդու իր նորածն ճարտարապետութեամբ: Գեռ հեռուից գրաւում է մարդու ուշադրութիւնը նրա գլխին ծածանվող դրօշակը: Ի՞նչ պէտք է լինի սա—մտածում է մարդ զարմանալով թմնդարան, հասարակական գրադարան, հիւրանոց թէ մի որ և է գործարան... Մտնում ես մի փոքր ևս և առանց ուրիշի բացատրութիւնների հասկանում ես ամեն... Այդ դրօշակաւոր շինութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հասարակական արտաքին... Նրա մի կողմում ընկած է անգլիական պարտէզը, միւս կողմում հացի, մսի և այլ ուտելիքների խանութներ, իսկ չորս բոլորում—մրդի կրպակներ... Ինչ սքանչելի ներդաշնակութիւն, երևանցից զբոսնում է պարտիզում, ուտելիքներն է գնում, անցողաբար է անում հրապարակով և իր հաստ քթին դիպում է միշտ մի բարակ հոտ... Այդ մթթէ էտտեութեան վայելչութիւն

չէ: կարծեմ 7—8 տարի է որ գոյութիւն ունի այդ հասարակական հիմնարկութիւնը: Եւ անշուշտ դեռ շատ տարիներ էլ կը շարունակի սրտի բերկրանք պատճառել գեղեցկասէր երեւանցիներին:

Հոսը սաստիկութեամբ փչում է, մարդու զբաղումը ծակում, դրօշակը քոֆում, ծածանվում է երևանցիին զուարճանում է նոտ քաշելով և մաքուր օդ ծծելով...

Գիտական Վիլլիամովիչը իր շարադրութեան մէջ համոզիչ փաստերով ապացուցանում է, որ առհասարակ էստետիքական զգացումները հիմնված է նիւթական օգտի վրա: Չափազանց հետաքրքիր կը լինէր, եթէ քաղաքային ինքնավարութեան ներկայացուցիչները մի մասնաւոր նստի մէջ, ամեն մէկը իր մասնագիտութեան տեսակետից, որոշէին (բարակ հոտի) և Վիլլիամովիչը որոշակի նիւթական օգուտը... Կատարելականը ակնբեր է...

Ս. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Հինգշաբթի օր, 13-ին օգոստոսի լինելու է Արթուրու թատրոնում հայ սիրողների մի կօնցերտ-ներկայացում, յոգուտ մի երիտասարդի, որ գնում է Ս. Պետերբուրգի երաժշտական դպրոցը, երգեցողութեան մէջ կատարելագործվելու համար: Կօնցերտին կը մասնակցի պ. Մոյսիսանը, որ ինչպէս ասում են, գեղեցիկ ձայն ունի:

Հին-Նախնային Արթուրու մեզ գրում են, Վստասպատ գիւղում մօտիկ օրերս մի քանի օտարական պարսիկներ շարախոհութեամբ իրանց մէկ ընկերին խեղդամահ են անում պարանով և նորաչէն մէջիթի առաստաղի գերանից, ներսի կողմից կարն են տալիս: Նոյն գիւղի մի հայ երիտասարդ բաճը ունին դրած, գնալու է լինում յանդը. տեսնելով կարածին, նա բաճով շարժում է դիակը և յանկարծ անարկու սարսափ է տիրում սրբմելուն: Նա փախչում է յանդը, իսկ այնտեղ մի անագին օձ սկսում է հարածել անբաղդին: Վախից նա հիւսնաբանում է և երեկոյան սուն վերադարձած՝ սարկում է: Երեք օրից յետոյ խեղճը մեռնում է:

Մեզ պատմում են հետեւալը: Էջմիածնից Մանկունու յանձնարարութեամբ Թիֆլիսի տէր Սարգիս Աղաջանեան աւագ քահանայն մի վաճառականից գնելով ճեմարանի համար 3,500 արշին կտաւ, ստիպում է վաճառականին որ իւրաքանչիւր մի արշինի գին վրա հաշուարկուի մէջ մի մի կօպէկ աւելի գրէ: Վաճառականը չէ համաձայնվում աւելացնելու, առանց մի օրինաւոր պատճառի: Այն ժամանակ տէր-հայրը իր անելիքը փաստարանելու համար, հաւատացնել է սկսում, որ Էջմիածնից իրան վրա փող ուղարկած ժամանակ, թէև ծրարի վրա զբրած է լինում 1,000 ռուբլ, բայց բաց արած ժամանակ գտնում է միայն 800 ռուբլ. տէր-հայրը յոճոճ չինելու տեղ, աչքն էլ է հանում, քանի որ յայտնի է թէ փոստատան մէջ չէ կարելի ութ հարիւր ռուբլու ծրարը հազարի տեղ ընդունել տալ: Իսկ ճշմարտան այն է, որ մեր զանազան տէր Սարգիսները հայ աղքատ գիւղացիներից ազգի որդոց լուսաւորութեան համար կօպէկ կօպէկ ժողոված նուէրներից կամենում են իրանց համար առատ կօմիսիա վերցնել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԿՆ ԻՆՉԻ՞ ԿԸ ԿԱՐՈՑԻ

Այս խնդրոյն նկատմամբ երկու տեսակ կարծիք կայ հրատարակչին վրայ: Ոմանք կը քննեն «Հայաստանի ժողովուրդն ուսման և կրթութեան պէտք ունի»: Ոմանք ալ կը քննեն թէ՛ մշակութեան, արուեստից և վաճառականութեան զարգացումն անհրաժեշտապէս հարկուոր է անդ: Այս երկու կարծիքներն ալ իրենց պաշտպաններն ունին, որք զօրեղապէս կը փաստարանեն: Գեր, Օրմանեան ալ Հայաստանի մայրա-

քաղաքի մէջ իւր ստացած մի տարուան փորձառութեան վրայ յինով՝ կը փորձէ հաստատել թէ արուեստը և մշակութիւնը ի Հայաստան չայուն ձեռքն են և կը պընդէ ըսել թէ ուսում և կրթութիւն ծաւալելու պէտքն աւելի զգալի է: Չորեքշաբթի աւուր «Մասիս» մէջ Գեր, Օրմանեանի շարունակելի յօդուածին հոգին ճիշդ այս էր:

Մենք ալ՝ ըստ որում ի Հայաստան ձանբորդութիւն ըրած, տարիներով երկիրն ու ժողովուրդին բարոյական և տնտեսական վիճակն ուսումնասիրած ենք, կը համաձայնինք Գեր, Օրմանեանի հետ ըսելու թէ արուեստը և մշակութիւնը Հայաստանի մէջ չայուն ձեռք են այսօր:

Բայց երբ քննենք այդ արուեստից և մշակութեան արդի վիճակը, խնդիրն այն ատեն բոլորովին կը փոխուի և սա խնդիրը քննել հարկ կըլլայ թէ՛ զատոնք իրենց ներկայ վիճակին մէջ թողուլ և միմիայն ուսումն և կրթութիւնն յառաջ տանել պէտք է, թէ ուսման և կրթութեան ծաւալման հետ նաև արուեստից և մշակութեան զարգացումն ալ հարկուոր է: Մեր այս յարուցած խնդրոյն կը խնդրենք որ լաւ ուշադրութիւն ընծայուի:

Արուեստից և մշակութեան զարգացում պէտք է ըսելէն ընաւ չը հետեւի թէ Հայաստանի մէջ արուեստը և մշակութիւն չը կան: Այդ խօսքն եթէ տրամաբանական հետեւութիւն մ'ունի, այն ալ սա է թէ հոն արուեստը և մշակութիւն կան, սակայն իրենց նահապետական վիճակին մէջ են, որք ըստ տեղական պիտոյից և ըստ պահանջման ներկայ և մ'ան աւանդ սպառնալով ժամանակին՝ գոհացուցիչ լինելէ հետո ին և հետեւաբար հարկ է որ զանոնք զարգացնելու, այն է յառաջ տանելու հոգ տարուի: Ըսել է բուն խնդիրը գոյն և չը գոյն վրայ չէ, այլ զարգացնելուն, որ բունութեան օրէնք է, և մարդիկ ու ազգերն ալ յառաջդիմութեան դասը թուութենէն կը ստանան, բնութենէն, ուր ամեն բան կը շարժի, և ահա այդ շարժման յառաջդիմութիւն անունը կուտան: Այդ յառաջդիմութիւն պէտք է, թէ ոչ:

Եթէ պարտք է հետեւիլ բնութեան օրինաց, և եթէ հարկ է ժամանակիս ուղոյն և պահանջման առջև ժողովուրդը պատրաստել, անհրաժեշտապէս հարկ է նաև յառաջդիմել և այդ յառաջդիմութիւնը կատարելու ըլլալու համար մտաւոր և բարոյական կրթութեան հետ անհրաժեշտապէս հարկ է նաև արուեստ և մշակութիւն, որ անդամարդիի պէտք մ'է:

Այդ պէտքն սակէ առաջ «Երջի» մէջ խիստ ընդարձակ կերպիւ բացատրած և ժողովուրդը պատրաստելու միջոցներուն վրայ խօսած ենք մի առ մի, առարկելով թէ ինչ կըլլայ Հայուն վիճակն ի Հայաստան, երբ Եւրոպայի դրամատեսարք Հայաստանի մէջ արտօնութիւններ ձեռք բերեն անդ, և դարձեալ ինչ կըլլայ Հայուն վիճակն և ինչ կընայ ընել Հայն իր այս վիճակին մէջ մնալով՝ երբ օր մը Եւրոպացի գաղթականները սկսին ի Հայաստան բնակութիւն հաստատել:—գուշակութիւն կամ մարգարէութիւն ընելու պէտք չը կայ: Ժողովուրդն որ արդէն աղքատ է, իր ունեցած արդի արուեստներովն ու մշակութեամբը չը կրնալով մրցիլ Եւրոպացոյն հնարագիտութեանն և նորա նրբամիտ խորամանկութեանն հետ՝ պիտի ստիպուի հաց ծարելու համար կամ բոլորովին իր հայրենի երկրէն դուրս գաղթելու և կամ իր հայրենի երկրին մէջ պատառ մը հացի համար Եւրոպացոյն ծառայելու: Մեր այս

ըսածը կրնանք օրինակով մը հաստատել: Անգղիացիք Հնդկաստանի տէր ըլլալէ առաջ՝ Հնդկաստանի արուեստներն ու վաճառականութիւնն ինչպէս նաև երկրին վարչութիւնն ալ Հայոց ձեռքն էին, բայց երբ Անգղիացիք տէր եղան բուն իսկ Հայոց օգնութեամբն այդ երկրին, ինչ եղաւ հոն Հայոց վիճակը:—բացատրելու հարկ չը կայ, որովհետև ամենու ալ յայտնի է արդէն:

Այսպիսի պարզ իրողութեան մը առջև կրնանք մակարբերիլ այն հետեւանքներն, որ կրնան յառաջ գալ մեր անպատրաստակալութեանը պատճառաւ, երբ Եւրոպացի դրամատեսարք արտօնութիւններ ձեռք բերեն և կամ, ինչպէս անհաւանական չը թուիր, Եւրոպացի գաղթականութիւններ հաստատուին ի Հայաստան:

Մենք զմեզ խիստ աղէկ կը ճանչնանք և պէտք է որ ճանչնանք: Ինչ որ չունինք և ինչ որ չենք, զայն ըլլալ կը կարծենք և այնպէս կուզենք հաւատալ թէ պատրաստակալութիւն և ամեն կերպ արժանաւորութիւն ունինք: Թող օտարին առջև այսպէս երևանք. առկէ կորուստ չունինք, շահ ունինք, բայց ներքնապէս պէտք է աղէկ գիտնանք և ճանչնանք մեր բուն վիճակն ու կացութիւնն և հետամուտ ըլլանք թէ մենք ինչ և ո՞րպիսի անհրաժեշտ պէտքեր ունինք:

Մենք զմեզ խիստ աղէկ կը ճանչնանք ըսինք. այո, կը ճանչնանք, որովհետև գիտենք որ երբ փոստը գեռ չէ հասած, ոտքերնիս ջուրը կը կտնենք. իսկ երբ վրտանգն հասնի, մէկէն ի մէկ կը բռնկինք, իրար կանցնինք, աղաղակներով օղը կը թնդացնենք և կրակ կայ կը պոսանք:

Պարզ ըսենք, երբ գործելու ատեն կայ, խօսքով կանցնենք ժամանակինս, անշուշտ կարծելով թէ խօսիլը գործել է և ահա այս պատճառաւ է որ մենք մինչև հիմա չենք կրցեր պարագաներէ օգուտ քաղել: Այսօր ալ ճիշդ նոյն վիճակին մէջ ենք տակաւին, այսինքն, դեռ կը վարանինք գիտնալու համար թէ Հայաստանի ժողովուրդն ինչ բանի պէտք ունի:

Այս հարցման պատասխանը կուզայ ճիշդ ու ճիշդ բացատրել սա խնդիրը թէ Հայն Հայաստանի մէջ ինչպէս կրնայ ապրիլ և իւր ազգայնութիւնը պահպանել: Ըսել թէ միմիայն ուսման և կրթութեան ծաւալմամբ կրնայ Հայն Հայաստանի մէջ իրեն յարմար և վայելուչ դիրք մը բռնել, խընդելը չը հասկնալ կը նմարդի:

Նոյնպէս՝ առարկել թէ միմիայն արուեստից և մշակութեան զարգացմամբ կըրնայ Հայն անդ կարեւոր դիրք մը ձեռք բերել, կը նշանակէ գարձեալ թէ խնդիրը լաւ չէ ըմբռնուել:

Ոչ միայն ուսման և կրթութեան ծաւալմամբ և ոչ ալ միայն արուեստից և մշակութեան զարգացմամբ, այն է, տնտեսական վիճակի բարեւթմամբ կրնայ նոյն դիրքը ձեռք բերել, և հետեւաբար՝ երկրին իրեն մի պատրաստ, արժանաւոր և միակ կարեւոր տարրն համարուի: Ուստի մեր եզրակացութիւնն այն է թէ ուսման և կրթութեան ծաւալման հետ նաև հարկ անհրաժեշտ է արուեստից և մշակութեան զարգացման ալ լրջօրէն հոգ տանիլ:

Այժմ կը մնայ գիտնալ թէ Հայաստանցոյն ինչ և ո՞րպիսի կրթութիւն տալ պէտք է, և թէ արուեստից և մշակութեան զարգացումը ըսելով ինչ պէտք է հասկնալ:

Ասոնք պիտի ըլլան այսուհետև մեր քննելիք խնդիրները: (Երջ)

ԱՆԳՆԻՍ

Լօրդերի ժողովը համեմատաբար շատ քիչ ժամանակ գործ դրեց իրականական կալուածական օրէնքը քննելու և ընդունելու համար: Գլխաւորն մշակած և առաջարկած վերանորոգութիւնը համայնքների ժողովի մէջ քննվում էր ամբողջ երեք ամիս: Ամեն բան, ինչ որ կարելի էր անել յոստ գուտ կամ ընդդէմ օրինագծի, արդէն անվեցաւ համայնքների ժողովի մէջ, այնպէս որ լօրդերը շատ քիչ նոր բան պէտք է անելուցնէին:

Շատերի համար կարող է օտարօտի երևալ այն հանգամանքը, որ լօրդերի ժողովի մեծամասնութեան առաջնորդները խիստ կրիտիկայի ենթարկեցին այն սղբբունքները, որոնց վրա հիմնված է Գլխաւորն օրինագիծը և այնու ամենայնիւ վերջնական վճիռ կայացրին օրինագիծը ընդունելու համար: Հէնց որ օրինագիծը առաջարկվեցաւ լօրդերի ժողովին պահպանութեանը և անշուշտ կաշառուական առաջնորդ լօրդ Սալիսբուրի կողմից օրինագիծը խիստ քննադատութեան ենթարկվեցաւ և վերջնականապէս պախարակվեցաւ: Նոյնպէս վարվեցան պահպանողականների և այլ նշանաւոր անդամները: Այնու ամենայնիւ վճիռվեցաւ սկսել օրինագծի երկրորդ ընկերացնութիւնը և մի քանի փայլուն ձեռքից և աննշան փոփոխութիւններից յետոյ կալուածական ամբողջ օրինագիծը ընդունվեցաւ լօրդերի ժողովից գրեթէ առանց բուէարկութեան:

Անգլիական լօրդերը այս անգամ էլ հաւատարիմ մնացին իրանց անցեալի աւանդութիւններին, անիրաւացի համարելով արդէն դնել մի վերանորոգութեան իրագործմանը, որի անհրաժեշտութիւնը ճանաչվեցաւ անգլիական հասարակական կարծիքից և նրա գլխաւոր ներկայացուցիչ համայնքների ժողովից: Լօրդերի ժողովը յայտնեց իր կարծիքը նոր օրէնքի մասին և այնուհետև հաստատեց նրան, ազատ մնալով պատասխանատուութենից: Եթէ այդ վերանորոգութիւնը վատ հետեւանքներ կունենայ, լօրդերը կարող են արդարանալ, ցոյց տալով իրանց ընդդիմադրութիւնը և քաղաքական հետաետեւութիւնը, իսկ եթէ վերանորոգութիւնը լաւ կը լինի, նրանք կարող են պարծենալ, որ օրինագիծը իրանք հաստատեցին: Այդպիսով լօրդերի ժողովը մեծ խոհեմութիւն արաւ, չեզոք մնալով այդ նշանաւոր հարցի վերաբերութեամբ և կատարելով այն դերը, որ նրան տուել են անգլիական օրէնքները:

ԳԼԱՒՍՏՈՆԻ ԶԱՌԸ

Լօնդոնի լօրդերի տարեկան սովորական ճաշի ժամանակ Գլխաւորն արտասանեց հետեւալ ճառը: «15 ամիս սրանից առաջ մենք ընդունեցինք կառավարչական իշխանութեան ծանր և մարդկային ուժերի վեր եղած լուծը: Որքան էլ ընդարձակ լինեն կառավարութեան ընդունակութիւնները, որքան էլ նա լարէ իր ոյժերը, այնու ամենայնիւ նա կատարելութեամբ չէ կարող իրագործել այն բարձր կոչումը, որ որոշել են նրա համար մի ընդարձակ կրիտիկա: Այսպէս թէ այնպէս հոյեալք ձգելով այդ անցեալ 15 ամիսների վրայ, որ հարուստ է սխուր և միջնարակաւ ցերեղով՝ կը տեսնենք, որ այդ ժամանակաւ միջոցը աննկատելի չէ անցել թէ մեզ համար և թէ օտարականների համար: Այն ինչոր ես կամենում եմ ասել մեր անային»